Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«24» 11 2025 г. № 113

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 20.12.2024 թվականին ՌԴ Մոսկվա քաղաքում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Երևան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» Փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի գործունեության իրականացման պայմանների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), ղեկավարվելով Համաձայնագրի 6-րդ կետով և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրության 62-րդ կետի 10-րդ ենթակետով և նպատակ ունենալով հաստատել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հանրակրթական դպրոցի ընդունելության կարգը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի ընդունելության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի ընդունելության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի, ինչպես նաև Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի՝ 2025-2026 ուսումնական տարում, ըստ ընդունելության արդյունքների, զուգահեռ դասարանների քանակներն՝ ըստ դասարանների՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ընդունել ի գիտություն, որ Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, իրականացվող հանրակրթության մեջ ընդգրկված սովորողները Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց ընդունվում են տեղափոխման կարգով:

4. Հիմնարկի տնօրեն Ա.Գրիգորյանին՝ սահմանել Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց, ինչպես նաև Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց՝

1) ընդունող հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը,
2) ընդունելության ժամանակացույցը,
3) ընդունելության համար դիմումների օրինակելի ձևերը:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ -
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **Ա.ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված N 1
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

«24» 11 2025 թվականի հրամանի

ԿԱՐԳ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են դպրոցահասակ երեխայի (այսուհետ՝ Սովորող)՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները:

2. Կարգը մշակվել է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 20.12.2024 թվականին ՌԴ Մոսկվա քաղաքում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Երևան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի գործունեության իրականացման պայմանների մասին» համաձայնագրին, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին, Հիմնարկի կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

3. Դպրոց ընդունելությունը կազմակերպվում է Հիմնարկի տնօրենի հրամանով ձևավորված ընդունող հանձնաժողովի միջոցով, իսկ ընդունելության հետ կապված համապատասխան ժամանակացույցը հրապարակվում է Հիմնարկի պաշտոնական համացանցային «www.gaus.am» կայքում:

4. Դպրոց կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, այլ պետության քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հայաստանի Հանրապետության
օրենսդրության, այլ իրավական ակտերի, Հիմնարկի կանոնադրության և Կարգի պահանջներին համապատասխան՝ վճարովի հիմունքներով:

Դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացվում է Հիմնարկի տնօրենի հրամանով՝ Սովորողի ծնող(ներ)ի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ Ծնող) գրավոր դիմումի և Հիմնարկի ու Սովորողի Ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սովորողին Դպրոց ընդունելու հրամանին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում ընդունված Սովորողի տվյալները Հիմնարկի տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը մուտքագրում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վարվող «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»:

Սովորողի ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է՝

1) Հիմնարկի մանկապարտեզից Դպրոցի առաջին դասարան ընդունվող երեխաներին,

2) Դպրոցում, ինչպես նաև Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին,

3) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողների երեխաներին:

6. Սովորողին Դպրոց ընդունելիս կազմակերպվում է դպրոցին հոգեբանական պատրաստվածության հետազոտություն-հարցազրույց՝ առաջին դասարան ընդունելության դեպքում (առանց գիտելիքների ստուգման), իսկ երկրորդ և բարձր դասարան ընդունելության դեպքում՝ գիտելիքների ստուգում Հիմնարկի տնօրենի հրամանով սահմանված կարգով:

7. Սովորողի ընդունելությունը Դպրոց կարող է մերժվել՝ առանց որևէ բացատրության:

III. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՓՈԽՄԱՆ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Սովորողին Դպրոց ընդունելու համար Ծնողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝ հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ.

1) դիմում (Հիմնարկի տնօրենի հրամանով հաստատված օրինակելի Ձև)՝ ուղղված Հիմնարկի տնօրենին,

2) Սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

3) Սովորողի ծննդյան վկայականի և (կամ) անձնագրի (առկայության դեպքում) բնօրինակը,

4) Սովորողի Ծնողների անձնագրի բնօրինակներն, ինչպես նաև հանրային ծառայության համարանիշերի կամ դրանցից օրենքով սահմանված կարգով հրաժարված

լինելու մասին տեղեկանքի պատճենները՝ համապատասխան պայմանագիր կնքելու նպատակով,

5) Սովորողի 2 լուսանկար՝ 3x4 չափսի՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում», սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

6) Սովորողի «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարանի և ուսումնական տարվա սկզբում ավագ Դպրոցի 10-րդ դասարանի ընդունելության)՝ առկայության դեպքում,

7) նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաև ընթացիկ և կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

8) Սովորողի տեղափոխման թերթիկը (առկայության դեպքում և եթե Սովորողի տվյալները առկա չեն «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում») ուսումնական հաստատությունից Դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունելության),

9) հիմնական կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (կամ դրա հսկիչ համարն ու տրման ամսաթիվը)՝ 10-12-րդ դասարաններ ընդունելության դեպքում,

10) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից,

11) հոգեբանական պատրաստվածության հետազոտություն-հարցազրույցի և գիտելիքների գրավոր ստուգման իրականացման, ինչպես նաև ընդունելության փաթեթի կազմման համար սահմանված վճարի անդորրագրի պատճենը,

12) Սովորողի Ծնողի ցանկությամբ այլ փաստաթղթեր:

9. Սովորողին Դպրոց ընդունելու մասին դիմումը և կից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ սկանավորված տարբերակով Հիմնարկի «school@gaus.am» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով՝ դրանց բնօրինակները ոչ ուշ, քան մինչև Հիմնարկի ու Սովորողի Ծնողի միջև պայմանագրի կնքումը ներկայացնելու պայմանով:

Հավելված N 2
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

«24» 11 2025 թվականի հրամանի

ԿԱՐԳ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են դպրոցահասակ երեխայի (այսուհետ՝ Սովորող)՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկում (այսուհետ՝ Հիմնարկ) Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները:

2. Կարգը մշակվել է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 20.12.2024 թվականին ՌԴ Մոսկվա քաղաքում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Երևան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի գործունեության իրականացման պայմանների մասին» համաձայնագրին, 29.12.2012 թվականի «Ռուսաստանի Դաշնությունում կրթության մասին» N 273-ՓԶ դաշնային օրենքին, Հիմնարկի կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

3. Դպրոց ընդունելությունը կազմակերպվում է Հիմնարկի տնօրենի հրամանով ձևավորված ընդունող հանձնաժողովի միջոցով, իսկ ընդունելության հետ կապված համապատասխան ժամանակացույցը հրապարակվում է Հիմնարկի պաշտոնական համացանցային «www.gaus.am» կայքում:

4. Դպրոց կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, այլ իրավական ակտերի,

Հիմնարկի կանոնադրության և Կարգի պահանջներին համապատասխան՝ վճարովի հիմունքներով:

5. Դպրոցի առաջին դասարան Սովորողը կարող է ընդունվել 6 տարեկան և 6 ամսական տարիքը լրանալուց հետո՝ առողջական պատճառներով հակացուցումների բացակայության դեպքում, բայց ոչ ուշ, քան ութ տարեկան դառնալը: Ծնողի համապատասխան դիմումի դեպքում Հիմնարկի տնօրենն իրավունք ունի թույլատրելու Սովորողի ընդունելությունը Դպրոց՝ տարրական ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթություն ստանալու նպատակով, սույն պարբերությամբ նշվածից ավելի վաղ (բայց ոչ ավելի վաղ, քան Սովորողի վեց տարեկանը (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը)) կամ ավելի ուշ տարիքում:

6. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացվում է Հիմնարկի տնօրենի հրամանով՝ Սովորողի ծնող(ներ)ի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ Ծնող) գրավոր դիմումի և Հիմնարկի ու Սովորողի Ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

1) Սովորողին Դպրոց ընդունելու համար Ծնողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝ ռուսերեն՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ, կամ այլ լեզվով՝ ռուսերեն և հայերեն պատշաճ թարգմանություններով՝ նոտարական կամ անհրաժեշտության դեպքում՝ ապոստիլով վավերացվամբ դիմում (Հիմնարկի տնօրենի հրամանով հաստատված օրինակելի Ձև)՝ ուղղված Հիմնարկի տնօրենին,

2) Ծնող(ներ)ի անձնագրերի պատճենները,

3) Սովորողի ծննդյան վկայականը և անձնագիրը (առկայության դեպքում),

4) Սովորողի 2 լուսանկար՝ 3x4 չափսի,

5) Սովորողի և Ծնող(ներ)ի բնակության վայրի մասին տեղեկանքները,

6) Սովորողի անձնական գործը (այլ կրթական հաստատությունից տեղափոխվելու դեպքում),

7) հոգեբանական պատրաստվածության հետազոտություն-հարցազրույցի և գիտելիքների գրավոր ստուգման իրականացման, ինչպես նաև ընդունելության փաթեթի կազմման համար սահմանված վճարի անդորրագրի պատճենը,

8) Սովորողի Ծնողի ցանկությամբ այլ փաստաթղթեր:

Ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելիս Ծնողը պարտավոր է ներկայացնել Սովորողի Ծնողների անձը հաստատող փաստաթղթերի և Սովորողի ծննդյան վկայականի բնօրինակները, որոնք պատճենների հետ համեմատվելուց անմիջապես հետո վերադարձվում են:

7. Սովորողին Դպրոց ընդունելու մասին դիմումը և կից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ սկանավորված տարբերակով Հիմնարկի «russianschool@gaus.am» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով՝ դրանց բնօրինակները ոչ ուշ, քան մինչև Հիմնարկի ու Սովորողի Ծնողի միջև պայմանագրի կնքումը ներկայացնելու պայմանով:

8. Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում (ստեղծվում) է անձնական գործ, որում պահվում են ընդունելության ժամանակ ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ սովորողի ուսումնառության ողջ ընթացքում:

9. Սովորողի ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է՝

1) Հիմնարկի մանկապարտեզից Դպրոցի առաջին դասարան ընդունվող երեխաներին,

2) Դպրոցում, ինչպես նաև Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և

միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին,

3) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողների երեխաներին:

10. Սովորողի ընդունելությունը Դպրոց կարող է մերժվել՝ առանց որևէ բացատրության:

Հավելված N 3
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

«24» 11 2025 թվականի հրամանի

ՀԻՄՆԱՐԿԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԶՈՒԳԱՀԵՌ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Հ/հ	Դասարանները	Քանակները	
		Հայկական դպրոց	Ռուսական դպրոց
1.	1-ին	5	1
2.	2-րդ	6	1
3.	3-րդ	5	1